Քաղաքում հյուրանոցային աշխատողների նվազագույն աշխատավարձի մասին հրամանագիր

Հյուրանոցային աշխատողների իրավունքների մասին ծանուցում

Այս գործառույթն ենթարկվում է քաղաքի հյուրանոցային աշխատողների նվազագույն աշխատավարձի մասին հրամանագրին (CHMWO) (LAMC SEC 186.09) և պարտավոր է հյուրանոցային աշխատողներին վճարել նվազագույն աշխատավարձ: Նվազագույն աշխատավարձը կիսատակեցվի ամեն տարի՝ համաձայն քաղաքի հյուրանոցային աշխատողների նվազագույն աշխատավարձի մասին հրամանագրի 186.02.A բաժնի:

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը.	Կիրառելիություն*	Ժամավճար
9/8/2025	**60 կամ ավելի սենյակներ ունեցող հյուրանոցներ**	**$22.50**
7/1/2026	60 կամ ավելի սենյակներ ունեցող հյուրանոցներ	$25.00
[redacted]		

*Համաձայն LAMC 186.01.C բաժնի՝ հրամանագրի դրույթները ներառում են օդանավակայանի հյուրընկալության գոտում (AHEZ) գտնվող 50 կամ ավելի սենյակ ունեցող հյուրանոցները:

Հյուրանոցային գործառույթները սպասարկման համար հաճախորդներից գանձած բոլոր **սպասարկման վճարները** պետք է վճարեն հյուրանոցային սպասարկման ծառայություններ մատուցող աշխատակիցներին: Գումարները պետք է վճարվեն հյուրանոցի աշխատակից(ներ)ին արդարացի կերպով և հյուրանոցի գործառույթի կողմից հաճախորդին տրամադրվող ծառայությունների վճարների նկարագրությանը համապատասխան (LAMC SEC 186.03):

Լոս Անջելեսի գործառույթները ենթարկվում են բոլոր տեղական, նահանգային և դաշնային նվազագույն աշխատավարձի վերաբերյալ օրենքներին և աշխատանքային չափորոշիչներին:

Լոս Անջելեսի Աշխատավարձի ստանդարտների գրասենյակի (Office of Wage Standards) հրամանագիրը Պայմանագրերի կառավարման բյուրոյին (Bureau of Contract Administration) և Աշխատավարձի ստանդարտների գրասենյակին հնարավոր խախտումները հետաքննելու, աշխատատեղերը ստուգելու, աշխատակիցների հետ հարցազրույցներ վարելու և աշխատավարձի հաշվեկշռություններն ուսումնասիրելու իրավասություն է տալիս: Աշխատավարձի չափորոշիչների գրասենյակը կկիրառի հյուրանոցային աշխատողների նվազագույն աշխատավարձի մասին հրամանագիրը՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալ խախտումների դեպքերով. 1) հյուրընկալության ոլորտի աշխատողների համար սահմանված նվազագույն աշխատավարձ չվճարելը, 2) ծանուցման, հայտարարության տեղադրման և աշխատավարձի հաշվառման պահանջները չկատարելը, և 3) աշխատակցի նկատմամբ վրեժխնդրությունը: Լոս Անջելեսի քաղաքային օրենսգրքի (LAMC) 188.04 բաժինը պաշտպանում է հյուրընկալության ոլորտի աշխատողներին ցանկացած խարդախությունից կամ հետապնդումից նվազագույն աշխատավարձ առանալու իրենց իրավունքը կիրառելիս:

Հանգստյան օրեր

Համաձայն LAMC 186.02.B բաժնի՝ հյուրընկալության ոլորտի գործառույթները պարտավոր են լրիվ դրույքով աշխատող աշխատակիցներին տրամադրել տարեկան առնվազն 96 ժամ վճարովի և առնվազն 80 լրացուցիչ ժամ անվճար արձակուրդ:
Համաձայն 186.02 B.1.(b) բաժնի՝ հյուրանոցի կես դրույքով աշխատող աշխատակիցը պետք է կուտակի շաբաթական 40 ժամ աշխատող աշխատակցի կուտակած ժամանակին համարժեք հանգստյան օրեր: Հանգստյան օրերի ընդհանուր կանոններ.

Հյուրանոցի աշխատակիցն իրավունք ունի օգտվելու կուտակված վճարվող և չվճարվող արձակուրդներից աշխատանքի **առաջին վեց ամիսներից** հետո կամ ընկերության քաղաքականությանը համապատասխան՝ կախված նրանից, թե որի համաձայն է արձակուրդը արտամադրվում ավելի շուտ:
Հյուրանոցի գործառուն **իրավունք չունի անհիմն կերպով մերժելու** կուտակված վճարվող կամ չվճարվող արձակուրդն օգտագործելու վերաբերյալ հյուրանոցի աշխատակցի խնդրանքը:
Եթե հյուրանոցի գործառույի քաղաքականությամբ ավելի շահավետ պայմաններ նախատեսված չեն, չօգտագործված կուտակված **վճարվող** արձակուրդը կարող է հասնել **մինչև առավելագույնը 192 ժամի**:
Եթե հյուրանոցի գործառույի քաղաքականությամբ ավելի շահավետ պայմաններ նախատեսված չեն, չօգտագործված կուտակված **չվճարվող** արձակուրդի ժամանակը կարող է հասնել մինչև **առավելագույնը 80 ժամի**:
Երբ հյուրանոցի աշխատակիցը կուտակում է չվճարվող արձակուրդի առավելագույն ժամանակը, հյուրանոցի գործառուն պարտավոր է յուրաքանչյուր 30 օրը մեկ վճարել դրամական փոխհատուցում առավելագույն ժամկետից ավելի կուտակված վճարվող արձակուրդի համար:
Հյուրանոցի գործառուն չի կարող կիրառել որևէ աշխատանքային քաղաքականություն այս հոդվածի համաձայն վերցված չվճարվող արձակուրդը բացակայություն համարելու նպատակով, որը կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության, ազատման, հեռացման կամ որևէ այլ անբարենպաստ գործողության:

Ավելին իմանալու համար կապվեք Աշխատավարձի չափորոշիչների գրասենյակի հետ՝ զանգահարելով 1-844-WAGESLA (924-3752), կամ գրեք wagesla@lacity.org էլ հասցեին, կամ այցելեք http://wagesla.lacity.gov/:

Որպես «Ամերիկացիների հաշմանդամության մասին» օրենքի II բաժնի (Title II of the Americans with Disabilities Act) ներքո ընդգրկված սուբյեկտ՝ Լոս Անջելես քաղաքը հաշմանդամության կարգավիճակի հիման վրա խտրականություն չի դրսևորում և ըստ պահանջի ապահովում է հավասար հասանելիություն իր ծրագրերին, ծառայություններին և գործունեությանը: